ՏԵՂԵԿԱՆՔ
«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 9. Ավտոկայանատեղի վճարի դրույքաչափի սահմանումը և վճարման ձևերը
(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)

1. Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ~~՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ~~:

~~2. Ընթացիկ տարվա համար ավտոկայանատեղի վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:~~

3. Նույն ավտոկայանատեղում միատեսակ ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար պետք է սահմանվի վճարի միասնական դրույքաչափ, եթե օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:

4. Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը սահմանում են ըստ կայանատեղի, Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների, այդ թվում՝ վարչական շրջաններում նաև գոտիավորման սկզբունքով, ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, ըստ վերջինով իրականացվող գործունեության բնույթի, ըստ օրերի և օրվա ժամերի, ըստ շաբաթների, ամիսների և տարվա: Ընդ որում, համայնքի ավագանին կարող է սահմանել կանխավճարային կտրոնային համակարգ:

5. Ավտոկայանատեղի վճարի վճարման ձևերը սահմանում է համայնքի ավագանին:

6. Ավտոկայանատեղի վճար գանձող մարմինը պարտավոր է վճար վճարողին տրամադրել վճարումը հավաստող անդորրագիր, ինչպես նաև՝ պահանջելու դեպքում վճար վճարողին տրամադրել վճարման վերաբերյալ տեղեկատվություն:

(9-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն, լրաց., խմբ. 20.01.21 ՀՕ-38-Ն)

Հոդված 10. Ավտոկայանատեղի վճարի դրույքաչափերը
(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)

1. Ավտոկայանատեղի վճարը գանձվում է Հայաստանի Հանրապետության դրամական արժույթով՝ դրամով:

~~2. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է վճար հետևյալ դրույքաչափերով՝~~

~~1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մինչև 300 դրամ ներառյալ.~~

~~2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մինչև 2500 դրամ ներառյալ.~~

~~3) մեկ շաբաթվա համար՝ մինչև 5000 դրամ ներառյալ.~~

~~4) մեկ ամսվա համար՝ մինչև 25000 դրամ ներառյալ.~~

~~5) մեկ տարվա համար՝ մինչև 300000 դրամ ներառյալ:~~

~~Ընդ որում՝ մեկ ժամվա համար սահմանված վճարի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար րոպեների հաշվարկման մեթոդ:~~

2. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է վճար հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մինչև 1000 դրամ ներառյալ.

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մինչև 5000 դրամ ներառյալ.

3) մեկ շաբաթվա համար՝ մինչև 10000 դրամ ներառյալ.

4) մեկ ամսվա համար՝ մինչև 80000 դրամ ներառյալ.

5) մեկ տարվա համար՝ մինչև 1000000 դրամ ներառյալ.

6) ընդ որում՝ մեկ ժամվա համար սահմանված վճարի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար րոպեների հաշվարկման մեթոդ:

(10-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն, 20.01.21 ՀՕ-38-Ն)

~~**Հոդված 18. Ավտոկայանատեղի վճարի ավել մուծված գումարները վերադարձնելը**~~

~~***(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)***~~

~~Ավտոկայանատեղի վճարի ավել մուծված գումարները ենթակա են վերադարձման ավտոկայանատեղի վճար վճարողի դիմումի հիման վրա՝ դիմումը հանձնելուն հաջորդող տասնհինգ օրվա ընթացքում:~~

~~***(18-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)***~~

Հոդված 18. Ավտոկայանատեղի վճարի վճարված գումարները վերադարձնելը

1. Ավտոկայանատեղի վճարի ավել վճարված գումարները ենթակա են վերադարձման ավտոկայանատեղի վճար վճարողի կողմից համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Ավտոկայանատեղի վճարի վճարված գումարները ենթակա են վերադարձման նաև այն դեպքերում, երբ սույն օրենքով նախատեսված տեղական վճարը վճարվել է ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի հաշվառման համարանիշի նշմամբ, որը տեղական վճարը վճարելու պահից մինչև վճարված գումարը վերադարձնելու դիմումի ներկայացման պահը հատկացված չի եղել (ներառված է եղել ազատ համարանիշների ցանկում) կամ համապատասխան վավերապայմաններով նշված հաշվառման համարանիշ առկա չէ: Սույն մասում նախատեսված դեպքերում տեղական վճարի վճարված գումարները ենթակա են վերադարձման ավտոկայանատեղի վճար վճարողի կողմից համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումի հիմքում ընկած փաստերի ապացուցման պարտականությունը կրում է դիմումատուն: Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստերն ապացուցված չլինելու դեպքում դիմումը ենթակա է մերժման՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում:

4. Ավտոկայանատեղի վճարի վճարումից հետո ավտոտրանսպորտային միջոցի կամ հաշվառման համարանիշի փոփոխման դեպքում վճարված տեղական վճարի գումարը ենթակա չէ վերադարձման և (կամ) հաշվանցման (այլ ավտոտրանսպորտային միջոցի կամ հաշվառման համարանիշի համար կիրառման):

5. Ավտոկայանատեղի վճարի վճարված գումարները ենթակա չեն վերադարձման, եթե վճարման պահից անցել է մեկ տարի: